## ԱՅԼԵՒԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Այս օրերս հրատարակուեցաւ Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի բժիշկ և Ուսուցիչ Գրիգոր պ. Տէր Գրիգորեանցից հայերէն թարգմանուած դոկտոր Ռէյխի «Ինչպէս պահպանել և բժշկել երեխաների աչքերը առանձնապէս շարաւային բորբոքումից» գրքոյկը։ Ցանկալի էր, որ ամեն համալսարանական հայ մասնագէտ իր մասնագիտութիւնից բաժին հանէր մեր բազմակարօտ Ազգին կամ ինքնուրոյն հեղինակութեամբ և կամ թարգմանաբար ինչպէս պ. Տէր Գրիգորեանցը։ Գրքոյկը տպուած է Մայր Աթոռոյս տպարանում. թուղթը և տիպը մաքուր են. բովանդակութիւնը և բաւական պարզ բացատրուած խրատները շատ օգտաւէտ են մանաւանդ այն տեղերաց համար՝ ուր հազուագիւտ են ուսեալ և բանիմաց մայրեր և մանկաբարձներ։ Թարգմանութեան ոճը բաւական հասկացրած է, թէև տեղ տեղ երևումեն բառերի անկանոն կազմութիւններ (եր. 24) և անտեղի գործածութիւններ (եր. 8 սպեղանիով օծել աչքի մօրթը և եր. 16 աչքի վերայ . . . . պինդ կապոց դնել) մութ դարձուածներ և կետադրութեանց զանցառութիւններ (եր. 1—2—9) և այլն։

***

«Живописное обозрѣніе» Ռուսաց շաբաթաթերթում կարդումենք, որ օրերումս երևելի արևելագէտ Անգղիացի Սիր—Րաուլինսոն կարդացել է մի նշանաւոր ասորերէն արձանագրութիւն սեպաձև տառերով, որի մէջ Պարսից Կիւրոսը դառնալով դէպի իր ժամանակակից և ապագայ մարդիկը աւետումէ նոցա իր զօրքերի յաղթութիւնը Ասորեստանի վերայ և Բաբելոնի նուաճումը։ Այս աւետիքի մէջ ոչինչ յիշատակութիւն չկայ «Բաղդասարի» վէպի մասին, որ պահպանուած է հրէական աւանդութիւններում։

Հնախօսները, որոնք պարապումեն արձանագրութիւններ ժողովելով, ոչ սակաւ օգտուել կարող են յիշեալ արևելագէտի գիւտից։

***

Նոյն շաբաթաթերթում կարդումենք Սաքսոնիայի Ալթենբուրգ հովտի մէջ մի բլրի վերայ բաւական խորութիւնում պատահմամբ յայտնուել է մի այր կամարներով և նրբաշաւիղներով. այստեղ գտնուած են ցայսօր ամբողջ մնացած մի քանի քարեայ գերեզմաններ մարդկանց ոսկորներով և զանազան տնական ու եկեղեցական զարդերի մնացորդներով, մանաւանդ սրբազնագործութեան և պատարագի վերաբերեալ անօթներով, զօրօրինակ խաչեր, մեծ և փոքր անօթներ։ Նայելով նոցա վերայ ցայսօր անջինջ մնացած փորագրութեանը և արձանագրութեանը, նոքա պատկանումեն քրիստոնէութեան առաջին դարին, երբ սա հալածվումէր Հռովմի կայսրներից։

Այնտեղ գտնուած մի քանի արձանագրութիւնները ևս վկայումեն թէ այս այրը յայտնի է եղել և Ս. Օգոստինոսին, որ մինչև անգամ ծածկուել է սա հալածողների խուզարկութիւններից։ Այժմ մեծ գործունէութեամբ աշխատումեն հետազօտել այս այրը։